ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Պետական ոչ առևտրային կազմակերպություն

0005, Երևան, Բուռնազյան 37, հեռ.՝ 57-84-53, 57-84-55, կայք՝ www.ktak.am, էլ. փոստ՝ info@ktak.am

№ 139/23

30.11.2023թ.

«Արմենյան Հայկ» Ա/Ձ-ին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լեոյի փող,. 74 տ.,
հեռ. 095 33 37 57,
ՀՎՀՀ 40140304
էլեկտրոնային փոստ eloyanvaruzhan2020@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ

Հարգելի պարոն Արմենյան,

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արմենյան Հայկ» Ա/Ձ (այսուհետ՝ Կատարող) միջև 23.11.2023թ. կնքվել է N «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/08-1» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով սահմանված էր, որ «Արմենյան Հայկ» Ա/Ձ-ն պարտավոր էր մատուցել Դեկտեմբերի 1-3-ը Գյումրի քաղաքի «Գյումրի» հյուրանոցում Իթվինինգի ուսուցիչների աշխատանքային խորհրդակցության անցկացման ծառայությունը: Սակայն, 2023թ. նոյեմբերի 29-ին lilit@ktak.am էլեկտրոնային փոստին «Արմենյան Հայկ» Ա/Ձ-ից (իր կողմից հայտի մեջ նշված էլեկտրոնային փոստից՝ eloyanvaruzhan2020@gmail.com) ստացվեց գրություն՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի պարոն Պողոսյան, Հայտնում ենք Ձեզ, որ տեխնիկական խնդիրների պատճառով մենք չենք կարող իրականացնել Գյումրի քաղաքի հյուրանոցային իթվինինգը»:

Հիմք ընդունելով Կատարողի գրությունը՝ Պայմանագրի կատարումից հրաժարվելու վերաբերյալ և Պայմանագրի 2.1.2 կետը՝ Պատվիրատուն 2023թ. նոյեմբերի 30-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ Կառավարության 2017թ.մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 7.9 կետով սահմանված դրույթները, համաձայն որի՝ «պայմանագիր անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին»:

Քանի, որ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով նախատեսված հանգամանքները. Պատվիրատուն օրենքով սահմանված կարգով կձեռնարկի «Արմենյան Հայկ» Ա/Ձ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգ:

Ընդունել ի գիտություն.

եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացվում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու

վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ծանուցումը հրապարակվում է 2023թ. դեկտեմբերի 1-ին:

Տնօրեն՝ Արտակ Պողոսյան